ՏՐԱՄՎԱՅԸ ՅԵՐԵՎԱՆՈՒՄ

ԽՆԿՈ-ԱՊԵՐ

ՆԿ. ՎԱՐԴ-ՊԱՏՐԻԿՈՎԱ.

ՊԵՏՀՐԱՏ 1934 ՅԵՐԵՎԱՆ

1631

25 OCT 2018

ՏՐԱՄՎԱՅՆ ՅԵՐԵՎԱՆՈՒՄ

Փնտրող, ընտրող գործարան,
Դու կրոնին հուպ ավիր,
Անսանձ ոխին խուփ դրիր,
Ճնշված մտքին՝ թև, թռիչք,
Նոր կենցաղին ձև տվիր։

Հայաստանը ցարի գաղութ,
Միությանն հետ՝ ալմաստ, լաղութ։

Առաջ՝
Մարագ... մգլած, բորբոսնած։
Ծակ ու ճեղքեր։ Դետնախորշ։
Դողերոցքի մատնված,
Արեվահար, գունատ, գորշ.
Մի մեծ գյուղ եր, — Մայրագյուղ
Իսկ հիմա.
Արար — աշխարհն իմանա—
Կարմիր աստղը ճակատին,
Հասած փառքի գագաթին՝
Մայրաքաղաք ՅԵՐԵՎԱՆ։

Թիֆլիս, Բագվին բախտակից,
Թիֆլիս, Բագվին սրտակից,
Թիֆլիս, Բագվին ուղեկից,
Թիֆլիս, Բագվին մրցակից—
Յերրորդ ԿԱՐՄԻՐ ՀԱՐԵՎԱՆ։

11-14029 ա/ա
11-46574 գ/ա

Մայրագյուղը՝ կավաշեն,
Մայրաքաղաք՝ քարաշեն։

Քանի՛, քանի՛ ու քանի՛...
Յերեք, չորս, հինգ հարկանի
Աննախընթաց,
Յերկնասլաց
Թը՛ռ-թը՛ռ, թեթև թռչնաթև,
Բանվորաշունչ, նորաձև
Նոր շենքերով զարդարվեց.
Ինչ կար փտած, ինչ կար հին,
Տալով հիմքից—հիմնովին
Մաքրող,
Զտող
Բոլշևիկյան հրդեհին,
Իր չտեսած բարձրությամբ,
Յերկարությամբ, լայնությամբ
Ընդարձակվեց, տարածվեց։

Հեռու, հեռու հին մտքից՝
Շենքեր ունի, նախագիծ.
Յեվ նոր թաղեր, բուլվարներ,
Յեվ հաղթական կամարներ,
Յեվ ԼԵՆԻՆԻՆ հուշարձան,
Յեվ վորոշման համաձայն՝
Լայնածավալ, հաստատուն
Պետթատրոնը և Ժողտուն,
Իր տեսակով և մի հատ՝
Աշխատանքի—աշխպալատ։
Նույնպես
Մեկը մեկից սեգ—
Բերիայի անվան
Կոմհամալսարան.
Մարքսիզմի—Լենինիզմի
Մի հոյակապ ինստիտուտ.
Յեվ ունիվերսալ խանութ.
Պատանի հանդիսատեսի մեծ թատրոն.



Կինոյի շենք, ստադիոն,
Տուն կառավարական,
Ցերկաթգծի հյուսիսային կայարան,
Տունը՝ գրքի, մամուլի,
Ելի, ելի.....
Նախանձելի, գովելի,
Մեր քաղաքին մի նոր զարդ
Սինթետիկ կաուչուկի կոմբինատ—





Մի գործարան՝ լերաց — մուրաց,
անհրաժեշտ.
Հարյուր հիսուն հեկտար գետին,
ասելն հեշտ.
Բանվորական հսկա ավան.
Ահա լերկրորդ ՀԵՑԱՄՅԱԿԻ նոր
Յերևան։



Շենքեր էլ կան՝ դեռ հատ-հատ,
Պակաս — պռատ, դեռ կիսատ.
Շենքեր թերի, անկատար.
Բայց զնդում է անդադար
Յերևանում ընդհանուր
Բոլշևիկյան մուրճը կուռ.
Հա զարկում է հա զարկում,
Կայծակում է, կայծարկում,
Այրում հինը և յեղծում,
Նորը կերտում, ստեղծում.

Ստեղծում նոր Յերևան՝
Աննախընթաց, աննման։
Զնգոցը քո անսպառ,
Բոլշևիկյան կուռ կռան,
Հին աշխարհից բերդերն ամ
Ու տեղն հիմնիր գործարան։



Տասից-տասնութ քո զարկով
Արդեն հողից շունչ առան,
Բոլշևիկյան թևի տակ
Գարուն բերին մեր դռան —

Գործարանը ԱՐԱՐԱՏ,
Կարբիդինը՝ յերկու հատ.
Բամբակզտիչ, Մետաքսի,
Ձեթ-ոճառի, Կոնսերվի,
Բազալտի թե Մարմարի,
Ծխախոտի թե Կարի,
Փայտաշկման թե Կաշվի —
Ե՛, բոլորը չեմ հաշվի։

Պողպատ Մուրճդ մեզ տվեց
Գործարաններ շինարար,
Բանվորական միջավայր—
Բանվորական նոր քաղաք,
ՍՈՑԻԱԼԻԶՄԻ
Այս մեծ ճամբին-լուսարձակ։

Մուրճ ու Մանգաղ, Գործարան,
Հազար բարով մեր դռան.
Գործարանը կործանից
Խաչ թե խաչվառ, ժամ, խորան։

Սև ուրուրը բարձրաթռռ,
Բռնակալը ծանրանիստ—
Ցեկեղեցին ուղղափառ,
Բեկորներին վոչ հանգիստ,
Հիմա՝
Տեղը կա
Հրապարակ ՇԱՀՈՒՄՅԱՆ,
Շահումյանի արձանով
Կոմունարը միշտ անմահ՝
Լի խոհերով, իղձերով։

Գրոց, բրոց, վայվայոց
«Լուսավորիչն» հին հայոց,
Անգանգ՝
Անգանգ,



Լուռ, անլեզու, անբերան,
Յեվ հնության թանգարան։

Խաչ ու գմբեթ պինդ գրկած
Պողոս-Պետրոսն ուր մնաց.
Քանաքեռցի Խաչատուր
Աբովյանին կուլ գնաց։
Հարված-մտքի այդ բանտին,
Իսկ հաղթարձան — տաղանդին։

Փնտրող, ընտրող գործարան,
Դու կրոնին հուպ ավիր,
Բաց բերանին խուփ դրիր,
Ճնշված մտքին՝ թև, թռիչք,
Նոր կենցաղին ձև ավիր։

Մուրճ ու Մանգաղ, Գործարան,
Բարով, բարով մեր դռան։

Մուրճ ու Մանգաղ, Գործարան,
Ձեզ հետ բերիք Ցերևան
Ծավարի դեմ պայքարող,
Ինչպես փարոս լուսաշող՝
Քանի՞, քանի՞ լուսիմնարկ՝
Ցոթնամյակ ու տասնամյակ,
Ինստիտուտ, տեխնիկում...
Ցերևանն ե ընդգրկում
Համալսարան բարձրագույն.
Կոնսերվատորիա —
Խորհրդային քաղցրահնչուն ոպերա.
Դաղիո-ցանց՝
Համատարած անսպառ գանձ։

Ընդգրկում ե նա դարձյալ
Ցեվ մի դպրոց միացյալ.
Աչք, աչքալույս՝ կույրերի,
Լեզու, բերան՝ համրերի։

Ցերևանը գրագետ.....
Կույր, համր ու խուլ անխտիր
Ցերևանը՝ մարդու գետ,
Վոտ դնելու տեղ գտիր.

Ցերևանը մարդ-հեղեղ,
Մարդն ե աճում, գերաճում,
Ինչպես իշխան ձկները
Սևանի պես մի լճում,
Տաս-տասներկու տարվա մեջ

Մի քսանհինգ հազարից,
Ցեղավ հարյուր
Հիսուն հազար բնակիչ։
Ցել ու մուտն ել թե թվենք,
Մի այդքան ել յերթևեկ.
Այդքան մնա դեռ վոչինչ։
Ցերևանը նոր քաղաք,
Մեր վերելքի, թռիչքի,
Ցերևանը՝ աչքի բիբ,
Պայծառ լույսը մեր աչքի։
Հայաստանի սիրտը նա,
Ցերակները արնատար.
Ուղեղի հետ կապ ունի,
Ցերկուսի մեջ տուր և առ։

Դիշեր, ցերեկ յեռուզեռ,
Այդքան հազար բնակիչ.
Փոխադրման միջոցներ՝

Ֆուրգոն, սայլ, կառք՝ քի՞չ են, քիչ։
Վորքան շատ մարդ, շատ պահանջ—
Քաղաքն ունի անելիք.
Ի՞նչ կլինի ապագան
Ծով պահանջով նոր գալիք։

Նոր շենքերին քար ու կիր.
Սարքավորում, շինանյութ.
Գործարաններն անխտիր
Պահանջում են շատ հումույթ։

Բանվորները յերթևեկ՝
Ուշանում են գործերից,
Ի՞նչպես հասնեն գործարան
Ցերևանի ծայրերից։

Մուրճ ու Մանգաղ, Գործարան
Ձայն են տալիս մեր դռան.
— Բանվորական պահանջին,
Բոլշևիկներ, ընդառաջ։
Բոլշևիկին շինարար՝
Կարիքի դեմ լինչ նահանջ։

Մեծ գետերն ե նա անցել,
Բարակ առվում խեղդվիլ չի.
Մայրաքաղաք Ցերևան,
Քաղխորհրդիդ դուրս կանչի։
Որն յեկել ե,
Հերթն հասել—
Ցերևանին տրամվայ.....
Ել չի լինի սպասել։

Այս մեծ կոչին բարձրականչ
Սրտանց գալով ընդառաջ՝
Քաղխորհուրդն ե վորոշում
Ցեվ ժամկետը ճիշտ նշում.

«ՑԵՐԵՎԱՆԻՆ ՏՐԱՄՎԱՅ՝
ՄԻ ՏԱՐՎԱ ՄԵՋ, ՄԻՆՉ ԱՇՈՒՆ»։

Խոսքը գործով պսակի.....
Քաղխորհրդի
Նախագահը շինարար
Ուժ ու յեռանդ անսպառ,
Նախագահը բիր-բրիչ,
Հնի քանդիչ, ավերիչ,
Ծառանում ե ուղղակի,
Այն ել՝ առանց գլխարկի,
Աբովյան մեծ փողոցում,
Քիթն ու մատը վեր ցցում.

«ՔԱՆԴԵԼ ՏԱԿԻՑ....
ՏՐԱՄՎԱՅԻՆ՝ ՑԵՐԿԱԹԳԻԾ»։

Սկսվում ե յեռուզեռ...
Փողոցն հոսում ծով, յեռանդ.
Ի՞նչ շոգ, ինչ ցուրտ, ինչ ձմեռ.
Աբովյանը քարուքանդ....
Բարձրանում ե փոշին դեռ։

Ծաղկափթիթ, ծաղկամիտ
Տղա, աղջիկ — կոմյերիտ,
Բանվոր, բան-կին՝ հավասար,
Անգամ ժողկոմ- կոմիսար,
Վերև քշտած թև, արմունկ,
Բահ, լոմ, կացին, մուրճ, քլունգ,
Քար, խիճ, ավազ, շպալ, ռելս—
Ցեկան իրար։ Տարին կես՝
Աբովյանով ծերեծեր

Զուլդ գծանի, զուլահեռ,
Ծերը մինչև կայարան,
Հեռու, մոտիկ գործարան,
Ճամբա բացվեց։ Մեզ համար։
Տրամվային մարդատար,
Տրամվային բեռնատար։

Տար, բեր,
Տար, բեր,
Մարդ ու բեռ։
Ի՞նչ շոգ,
Ի՞նչ ցուրտ,
Ի՞նչ ձմեռ։

Տասներկուսին հունվարի
Բացումը տրամվայի
Ցեվ հանձնումը քաղաքին,
Մեծ աշքալույս ամենքին։

Գնանք, լսենք՝ բոցավառ
Ջերմ վողջույններ, խոսք ու ճառ։

Գնանք, նստենք անպատճառ,
Զանգի ձայնն է հնչում, ա՛յ,
Տրամվա՛յ... տրամվա՛յ...

Ցլունում ծաղկած կոկոններ,
Կարմրագրոշ վագոններ.
Լուսով՝
Ենքան զեղեցիկ,
Մթնով՝
Լուսեր թռուցիկ.
Կարմիր-կապույտ, յերփներանգ
Վագոնները զընդ-զրանդ,
Վագոնները մարդատար,
Տա՛ր... տա՛ր... տա՛ր...
Մարդ են տանում կայարան,
Մարդ են բերում Աբովյան,
Մոտ ու հեռու գործարան.
Նստողն իջնել չի ուզում,
Նա, ինչպես թե յերազում,
Իր յերեկն է վերհիշում
Ցեվ այսորը փաղաքշում։

—Այսորվա դեմ յերեկն ի՞նչ...
Այսորն արև, պայծառ... ջինջ։

Յերեկվան ի՞նչ ափսոսանք,—
Արյունն, արյունը մենք տեսանք։

Ավազի հետ մաղվեցինք,
Քարերի հետ քաղվեցինք.
Առաջ անցանք՝ բոթեցին,
Ցետ մնացինք, կոթեցին։
Այսոր ա՛յ թե ուր հասանք...

Ինչ չտեսանք պատից կախ՝
Են մենք տեսանք ճակտից կախ։

Բոլշևիկյան թափ ու խելք,
Աննախընթաց մի վերելք։

Կյանքի ձևը հեշտացավ...
Մարդու աչքը կշտացավ.
Տրամվայի գալովը
Ի՞նչ անենք թե մեն-մենակ
Կառապանը վշտացավ։
Ազատվեցինք նրանից։

Տնտեսենք ժամ, ժամանակ,
Ե՛լ չուշանանք գործերից,
Ե՛լ չմնանք ամոթով.
Ցրտին, տաքին մենք վոտով
Գնալ, գալուց լավ պրծանք։

Տրամվայը կառուցող
Բանվորներին,
Բոլոր, բոլոր
Քրտինք թափող,
Սարքավորող,
Կարգավորող
Ընկերներին
Փառք..... Պարծանք։

Ոգուտը մեծ, անագին –
Գործարանին, քաղաքին։

Տրամվայը մեր դռան....
Մենք դեպի գործ, գործարան։
Մեծ գործարան, քեզ հարգանք,
Տրամվայով մենք կգանք,
Մեծ Բաբեկյան, Դրացի,
Քաղաքացի՛, քեզ այցի.
Քեզ հետ սրտով կը կապվենք,
Ցնորքներից կսթափվենք.

Քո պահանջով, Գործարան,
Տրամվայն ել—Յերևան։

Որն ե գալիս, հեռու չի.
Ծը՛լ.... ծլը՛նկ
Զը՛նգ... զրը՛նգ....
Տրամվայը կը կանչի.
— Յեկեք տանեմ, մարդ ու բեռ,
Տանեմ Վաղպատ.... Բանաքեռ...
ՆՈՐԱԳԱՎԻԹ...
ՇԵՆ ԳԱՎԻԹ....
ԹՈՄԱՐԶԱ...
Վերին, ներքին զուլդ
ՁԱՐԲԱԽ...
Յեվ լերբեանն տարագիր,
Նոր հիմնված ԱՐԱԲԿԻՐ...
ՄԱԼԱԹԻԱ...
Ամեն մեկը մի բաղա,
Քաղաքամաս, նորաթաղ.
Պարտեզ, այգի...
Կարմիր հագի...
Յերևանը՝ բարեկարգ.
Միությանը պատիվ, հարգ։

Հայաստանը՝ ցարի գաղութ...
Միության հետ՝ ազատ, լաղութ։

ԱՐԽԻՎ

Խմբագիր՝ Սիրաս
Տեխ. խմբ. Ս. Գասպարյան
Սրբագրիչ՝ Հ. Մանուկյան

Գլավլիտի լիազոր 279 Պատվեր 1111 Հրատարակչ
Պետհրատի տպարան, Յերևան, II Գեոս

200
ՀՀ Ազգային գրադարան
NL1133414

1 6 МАР 1936 193

11
46574

ԳԻՆԸ 50 ԿՈՊ.

ХНКО АПЕР

ТРАМВАЙ В ЭРИВАНИ

ГИЗ ССРА, Эривань, 1936